

**ԱՐՑԱԽԱՐԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԵԼՔԻ  
ԱՐՁԱԳԱՆՔԸ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԴԱՅ ՄԱՍՈՒԼՈՒՄ \***  
(1988 թ. փետրվար-հուլիս)

**ՆՎԱՐԴ ՍԵՂՐԱԿՅԱՆ**

**ԴՅ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հայցորդ**

Անցյալ դարի 60-ական թվականներից սկսած՝ կրկին վեր բարձրացավ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը: Արցախահայությունը բազմաթիվ նամակ-բողոքներ ուղարկեց Սոսկա և Երևան, որոնցում հարց էր բարձրացվում երկրամասը վերամիավորելու Սայր Ղայաստանին: Լեռնային Ղարաբաղի հայության այդ արդար պահանջին արձագանքեց նաև Սփյուռքը: Օրինակ՝ Լիբանանի «Երկարե Շերեփի» պաշտոնաթերքը հաղորդում է, որ Սերո Խանզադյանի գլխավորությամբ հայ գրողները 1976 թվականին նամակ են ուղարկել Խորհրդային Սիության ղեկավար Լեռնի Բրեժնևին՝ Լեռնային Ղարաբաղը Ղայաստանին վերամիավորելու վերաբերյալ: Վերջինս պատասխանել է. «Եթե այնտեղի հայերը մեծամասնություն են, ուրեմն հայերն այնտեղ կարող են բնակվել....ազատորեն, հետևաբար այդ միացման անհրաժեշտությունը չկա»[1]:

«Երկարե շերեփի» նաև հաղորդել է, որ 1987 թվականի հոկտեմբերին Լեռնային Ղարաբաղից և Ղայաստանից ԽՍՀՄ Ղատախազություն է ուղարկվել 72 փաստաթղթից բաղկացած գործ: Այդ փաստաթղթերում դատապարտվում է Ադրբեյջանի հակահայ գործունեությունը և Գև-ից պահանջվում էր հայկական տարածքները միացնել Խորհրդային Ղայաստանին [2]:

Ղայկական Կենտկոմը ԽՄԿԿ Կենտկոմ ուղարկեց Ադրբեյջանի Կոմկուսակցային Կենտկոմին թե՝ իրու ամհարթահարելի դժվարություններ կան Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հետ կապված: Այդ տվյալները կազմել են Ղայաստանի ծանապարահաշինության և օգտագործման նախարար Մելքոնյանի ու կապի նախարար Միրզոյանի կողմից: Որոշ ժամանակ անց Լիբանանի «Ազդակի» խմբագրությունը, հետևողական քայլեր ծեռնարկելով, փորձում էր հասարակության դատին ներկայացնել Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հետ կապ ունեցող այդ հարցերի պատասխանը: 1987 թ-ին Ղայկոմկուսի Կենտկոմը կրկին ԽՄԿԿ Կենտկոմ ուղարկեց իր տեսակետը, որտեղ նշված էր, թե բնակչությունը պահանջում է լուծել Լեռնային Ղարաբաղի հարցը և այն վերջնականապես միացնել Սայր Ղայաստանին, և որ դա համայն հայության ցանկությունն էր: Թերթի խմբագրությունն ապա ավելացնում է, որ 1987թ. ապրիլի 10-ին՝ ԽՍՀՄ գերագույն դատախազության փաստացի նյութերով մեղադրանք- դիմում էր ուղարկվել Երկու հայ քաղաքացիների կողմից, որոնք դատապարտում էին Ղեղյար Ալիևին՝ կուսակցության նախկին ղեկավարին, հայ բնակչության դեմ ազգային հակասարության օրենքի «Ադրբեյջանի օրենսգրքի 69-րդ հոդվածը խախտելու կապակցությամբ» [3]: 1988թ-ի սկզբին ԽՄԿԿ Կենտկոմը պետք է քննարկեր Լեռ-

\* Ղողվածն ընդունվել է 15.03.2013:

Ղողվածը տպագրության է երաշխավորել պ.գ.դ., պրոֆ., գիտական ղեկավար Յ. Աբրահամյանը:

նային Ղարաբաղի հարցը: Մինչ այդ արդեմ ամենուրեք տեղի էին ունենում ցույցեր [4]: Ցուցարարները պահանջում էին Լեռնային Ղարաբաղի հարցին տալ արդարացի լուծում:

Փետրվարի 11-ից Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտի հրապարակում ցույցերի մեջ ալիք սկսվեց: Կրկին փետրվարի 13-ին՝ Ստեփանակերտի Լենինի (այժմ՝ Վերածննդի հրապարակ) անվան հրապարակում ժողովրդական ցույց տեղի ունեցավ: Լեռնային Ղարաբաղի հնքնավար Սարգի Սարգային խորհուրդը փետրվարի 20-ի հերթական արտահերթ նստաշրջանում ձայների մեծամասնությամբ որոշեց հարց բարձրացնել վերադաս մարմինների առաջ՝ Լեռնային Ղարաբաղը միացնել Խորհրդային Հայաստանի: Այդ օրերին ցույցեր տեղի ունեցան նաև Երևանում և Հայաստանի այլ տեղերում: Այդ մասին հաղորդում է Լիբանանի «Երկարե շերեփ» թերթը [5]: Ցուցարարների թիվը Երևանի Օպերայի հրապարակում փետրվարի 20-ին հասնում էր 10 000-ի: Այդ թիվը գնալով ավելանում էր և փետրվարի 22-ին հասնել էր 70 000-ից մինչև 100 000-ի [6]: «Ազդակը» հաղորդել է, որ Լենինի անվան հրապարակում հավաքված ցուցարարները լիարժեք պատասխան էին պահանջում իրենց բողոքի պատասխանը չստանալու համար:

«Ազդակ» պաշտոնաթերթի հաղորդման համաձայն՝ փետրվարի 24-ին ցուցարարների թիվը հասնում էր 120 000-ի [7]: ԽՍԿԿ Կենտկոմի քաղըյուրոն ստիպված էր իր ներկայացուցիչներն ուղարկել Երևան՝ Լեռնային Ղարաբաղի հարցը կասեցնելու համար:

Փետրվարի վերջին արդեմ Երևանում ցուցարարների թիվը հասնում էր 1.5 միլիոնի: Այդ ժողովրդական ցույցին մասնակցում է նաև Ամենայն հայոց կաթողիկոս Վագգեն Ա-ն: Ցուցարարները պահանջում էին՝ արդարացի լուծում տրվի հայության պահանջման:

Մինչ այդ կազմակերպվել են հայկական ջարդեր՝ «Սումգայիթ», «Բաքու», «Գանձակ», «Ծուշի», «Աղդամ» և այլն, որոնք նախապես պահանջուրվել, կազմակերպվել և ղեկավարվել են Ադրբեյջանի իշխանությունների կողմից: Սումգայիթում բոլորի աչքի առջև հայ բնակչությանը, որոնց թիվը հասնում էր 18 հազարի, երեք օր շարունակ ջարդի ենթարկեց: Նրանք մազապուրծ փախան, հեռացան Ադրբեյջանից:

Եգիստոսի «Դուսաբեր» օրաթերթի հերթական համարներից մեկը հայտնում էր, որ 1988թ. փետրվարի 27-ին Խորհրդային Սիուրյան ղեկավար՝ Միխայիլ Գորբաչովը, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեյջանի ղեկավարները, կոչ հեղեցին իրենց երկու ժողովուրդներին, որ դադարեցնեն վայրագ գործողությունները և այդ հարցին քաղաքական լուծում տան[8]: Այդ առթիվ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ՀԱՐԳԲ)՝ Միխայիլ Գորբաչովին ուղղված հայտարարության մեջ ասված էր. «ԽՍԿԿ Կենտկոմի ընդհանուր քարտուղար ընկեր Միխայիլ Գորբաչով, Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակը մասնավոր ուշադրությամբ հետևում էր Լեռնային Ղարաբաղի հնքնավար Սարգի վերջին մեկ շաբաթվա գարգացումներին, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի մեջ շարունակվող անդադար կազմակերպվող ցույցերին, որոնք համաժողովրդային բնույթ ստացան»[9]: Թերթը շարունակում է,

որ զարմանալի չէ, երբ Խորհրդային հայությունը, կուսակցական և ղեկավար մարմինները, մտավորականները, գիտության ու մշակույթի ծառայողները միահամուռ նեցուկ կանգնեցին Լեռնային Ղարաբաղի արդար պահանջման: Թերթը շեշտում էր, որ ՀԱՇԳԲ-ն վստահ էր, որ ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովն ի նկատի կունենա հայ ժողովրդի ներկայացրած պահանջը և գոհացուցիչ պատասխան կտու:

Մեկ այլ թերթ՝ «Ազդակը» գտնում է, որ Խորհրդային Յայաստանը, կազմելով Միության անբաժան մասը, իր այս վճռական քայլով պետք է պաշտպան կանգնի հայության իրավունքներին և ստանձնի նրանց տարածքային պահանջների պաշտպանությունը: Ապա ավելացնում է, որ ՀԱՇԳԲ-ն համոզված է, որ Խորհրդային Միության կենտրոնական ղեկավարությունն իր պատմական առաջելությունը կօգտագործի և հօգուտ Խորհրդային Յայաստանի կվճռի Լեռնային Ղարաբաղի հարցը[10]:

Թերթն ընդգծում է, որ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Յայաստանին վերամիավորելու հարցը համայն հայության իղձն է: Նա համոզված է, որ շարժման մասնակիցները ամեն ինչ կանեն, որպեսզի այդ հարցը արդարացի լուծում ստանա: Թերթը նաև նշում է, որ ՀԺԸ-ն, Խորհրդային լայնածավալ գործունեություն ծավալելով, իր օժանդակությունն է բերել այդ հարցը լուծելու համար[11]:

Օրինակ է թերում, որ թերթը հասուն անդրադարձել է սփյուռքահայ ուսանողների՝ պայքարին մասնակցելու հարցին: 1988թ. փետրվարի 20-ին Օպերայի Ազատության իրապարակում իր խոսքն է ասել սփյուռքահայ ուսանողների ներկայացուցիչը: Այդ ուսանողները դեռևս 1987թ. նոյեմբերի 5-ին Յայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Ղեմիրյանին հղած նամակում հայտնել են, թե սփյուռքը Յայաստանի ժողովրդի կողքին է և մոտիկից հետևում է Յայաստանի անցուղարձին:

1988թ. փետրվարյան իրադարձություններին անդրադարձել է նաև Եգիպտոսի «Արև» օրաթերթը, որը, մեջ բերելով բանաստեղծուի Սիլվա Կապուտիլյանի ելույթը, կարևորեց հետևյալ միտքը. «Թե ինքը առանձնապես ցույցերին դեմ էր, սակայն, երբ Ադրբեյջանի կառավարությունը հրահրող հաղորդագրություններ էր ուղղում ազերի թուրքիականին», անկարելի էր լուր մնալ[12]: Նույն օրը Իգոր Մուրադյանի գլխավորությամբ ցուցարարների 10 հոգուց բաղկացած պատվիրակություն է գնում Կարեն Ղեմիրյանի մոտ և առաջարկները ներկայացնում նրան: Նենց այդ օրն էլ մտավորական և կուսակցական ակտիվից ստեղծվում է «Ղարաբաղ» կոմիտեն, որի մեջ մտան գործարար ներկայացուցիչներ [13]:

Սփյուռքահայ ուսանողները, ամեն տեսակ դժվարություններ հաղթահարելով, կապ էին հաստատում արտասահմանյան հայության հետ և նրանց հայտնում Յայաստանի ու Լեռնային Ղարաբաղի իրավիճակի մասին: Այդ ժամանակ ամբողջ հայության պահանջը միայն մեկն էր՝ Լեռնային Ղարաբաղը վերամիավորել Մայր Ղայրենիքին:

Եգիպտոսի «Շուսաբերը» հաղորդել է, որ Երկրի իրադրությունը որոշակիորեն փոխվեց, երբ Խորհրդային բանակը ժամանեց Յայաստան (70 հազար զինվոր, 500 զրահատար և 40 ուղղաթիր) [14], որոնց մեծ մասն ուղարկվեց Երևան, իսկ մնացածը՝ Մասիսի շրջան, որտեղ տիրում էր խառն իրավիճակ: Այդ ժամանակ

էր, որ Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտում մարզխորհրդի շենքի վրայից Աղբեջանի դրոշակը իջեցվեց, և բարձրացվեց Խորհրդային Հայաստանի դրոշակը: Մինչ դեռ Երևանի օպերայի հրապարակում տեղի էին ունենում խաղաղ և օրինավոր ցույցեր, որի ժամանակ «այլախոհ Պարույր Յայրիկյանն ու իր մի քանի հետևորդները փորձեցին այդ բնույթը խանգարել»[15],- ավելացնում է թերը:

Լեռնային Ղարաբաղի հնքնավար մարզը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու հարցը Սումգայիթում և այլ բնակավայրերում տեղի ունեցած իրադարձությունները լուսաբանվում էին նաև Արևմտյան Երկրների և հատկապես Լիքանանի հետադիմական մամուլի կողմից: Նրանք գտնում էին, թե իրքն բախումը տեղի է ունենում քրիստոնյանների և իսլամ շիաների միջև: Այսպիսով՝ նրանք վտանգում էին Միջին Արևելքի մեջ բնակվող հայ խաղաղ ժողովրդի կյանքը: Այս առիվ ՅԺԸ-ն 1988թ. մարտի 18-ին Բեյրութում արաբներեն «3 հստակեցում» վերնագրով թուցիկ տպագրեց՝ իրքն այդ իրադարձությունների բացատրություն, և այն տարածվեց արաբական Երկրներում, հատկապես Լիքանանում: Այդ թուցիկի մեջ նշված է, թե Լեռնային Ղարաբաղը հայկական տարածք է, քանի որ նրա բնակչության մեծամասնությունը ազգությամբ հայ է: Այդ հստակեցումը վերջանում է հետևյալ պարբերությամբ: «Իրականության մեջ համաշխարհային առաջին պատերազմի ընթացքում հայերի նեմ գործադրված ոժիրները իսլամական քողի տակ կատարվեցին միջազգային սիոնականության գրգռությամբ»:

1988թ. ապրիլի 7-ին հրապարակվեց Երկրորդ թուցիկը, որը բաց պատասխան էր Արևմտյան Բեյրութում հրապարակվող արաբատառ «Ալի Շիրաա» շաբաթաթերթի մեջ լույս տեսած այդ հարցի հետ կապված հոդվածի[16]:

Այս թուցիկը հստակեցնում և բնադատում է շաբաթաթերթը: Շեշտված է, որ հարյուր հազարամոց հայերի ցույցը, որը կազմակերպվել է առանց արտաքին միջամտության, թշնամական բնույթ չունի ոչ խորհրդային ղեկավարության և ոչ էլ Աղբեջանի ժողովրդի նկատմամբ:

«Ազդակը» նշում է, որ այդ Երկու թուցիկների տարածումը Լեռնային Ղարաբաղի հարցի իսկությունը արար և իսլամ զանգվածների համար պարզեց, մանավանդ հայկական ղեկավարության լոելության և սահմանափակվածության վերաբերյալ, որը լոեյյան արդարացնում էր արևմտյան Կեղծարարների լրատվությունը[17]: Իսկ Իրանահայ «Չառաջադիմական շարժումը», որն իրանահայության հիմնական արտահայտիչն ու նրանց շահերի պաշտպանողն էր, հրապարակեց հաղորդագրություն, որում տրված էր Խորհրդային Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների ամփոփ պատկերը: Այստեղ շատ հակիրծ պատմվում է, թե ինչպես են Ղարաբաղն ու Նախիջևանը Խորհրդային Աղբեջանի մաս կազմել: Թերթը եզրակացնում է որ այդ Երկու հայկական տարածքները պետք է անպայման միավորվեն Խորհրդային Հայաստանի կազմի մեջ[18]:

«Երկարե շերեփի» և «Լուսարձակի» հրապարակումները մեծ ընդունելություն են գտել թերթի ընթերցողների շրջանում: Թերթի հաղորդումների կողքին քննադատության են Եմբարկվում ազգային շահերին վճաս հասցնողները: Ավանդական կուսակցությունների ներսում կան անհատներ ու խմբեր, որոնք քննադատության թիրախն են դարձել: Այդ կուսակցություններն ընթանում են ազ-

գային ազատագրական պայքարի նշանակությունը[19]: Նայ ազգային շարժման և Նայ գաղտնի բանակի հիմնական նպատակն էր Սփյուռքում և մասնավորապես Սերծավոր Արևելքում հայ ժողովրդական զանգվածներին պատրաստել հեղափոխական ոգով և նրանց մղել մուքիայի դեմ՝ զինված պայքարի միջոցով բռնագրաված հայկական հողերն ազատագրելու համար:

Իրանում գործում է «Արաքս» Նայկական ժողովրդային միություն անունով շարժում, որն իր հրապարակած մամուլի միջոցով հեղափոխության է հասել և վերջին տարիներին իր ներկայացուցությունն ունեցել Խորհրդային Նայաստանում, մասնավորապես սփյուռքահայ ուսանողների շրջանում, և հայ զանգվածներին բացատրում հայկական նորագույն զինյալ պայքարի բնույթը:

«Երկար շերեփին» իր հունիս ամսվա բացառիկ համարում տպագրեց հետևյալ հաղորդագրությունը. «1988 թվականի հունիսի 15-ին հայության համրագումարային հաղթանակը Նայաստանի Գերագույն սովետի որոշումն էր, որով Արցախը վերադարձվում է Մայր Նայաստանին:

Նայաստանի Գերագույն խորհրդի արդար որոշումը՝ ընդունված 1988 թվականի հունիսի 15-ին, կարևոր նշանակություն ունեցավ: Գերագույն խորհուրդն, ընդառաջելով համայն հայության կողմից ներկայացված անհետաձգելի պահանջին, գիտակից պատասխանատվությամբ գոհացուցիչ պատասխան տվեց նրանց՝ կանգնեց հայ ժողովրդի կողքին և արժանավոր կերպով ներկայացրեց ու պաշտպանեց նրանց ազգային, տարածքային ու մարդկային իրավունքները»[20]:

Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզը Խորհրդային Նայաստանին միացնելու վերաբերյալ իր որոշումով՝ ՀՀՍԴ-ի Գերագույն խորհուրդը պաշտոնապես և պատմականորեն օրինականացրեց հայության արդար պահանջը: Այս գիտակցությամբ և համոզմնելով գոտեամուգած՝ հայությունը՝ թե՛ Արցախի, թե՛ Նայաստանի և թե՛ ամբողջ Սփյուռքի, կարող էր հուսար, որ համամիութենական չափանիշներով կվավերացվի իր արդար պահանջը, և կկատարվեն սահմանային անհրաժեշտ փոփոխություններ երկու հանրապետությունների միջև: Այդ առթիվ Լիբանանի հայ մամուլը ակնկալում էր, որ որոշակի լուծում կստանա համայն հայության արդարացի պահանջը:

Այդ հարցի շուրջ Կ. Պոլսի «Մարմարան» և Լիբանանի Նայկական ժողովրդային շարժման կենտրոնական խորհուրդը հունիսի 7-ին տպագրեցին հայտարարություն, որում ասված էր հետևյալը. «Աշխարհասփյուռ հայությունը՝ Նայաստանի Ազատագրության Նայ Գաղտնի բանակի համակիր Նայկական ժողովրդային շարժման և բազմաթիվ մասնաճյուղերի անունով պահանջեցին, ԽՀ Գերագույն խորհրդի 1988 թվականի հունիսի 15-ի միասում քննարկել ՀՀՍԴ-ի Մարզային սովետի դիմումը՝ ՀԴՀՍ-ը Նայկական ՍՍԴ-ի կազմի մեջ ընդունելու մասին»[21]:

Նայ ազգն իր իրավունքի համար ակնկալում էր դրական պատասխանական ստանալ Լեռնային Ղարաբաղի շուրջ ծավալված հիմնախնդրի քննարկումից: Վերջապես պահն էր տասնամյակներ շարունակ անտարբերության կաշկանդող շղթան կոտրելու, աշխարհին հայտնելու աշխարհասփյուռ հայության կամքը: Մակայն հայ ժողովրդի արդար բողոքի և արդար պահանջի ձայնը փորձում են խեղդել: Մասսանակից լինել այդ փորձերին՝ նշանակում է գնալ անլուր դավաճա-

**Առողջապահությունը** պահանջում էր հայ ժողովրդի ձայնը ճանաչելու ԴՍՍԴ-ն Գերագույն խորհրդի 1988 թվականի հունիսի 15-ի նիստի որոշումը:

«Մարմարան» նշել է, որ Ղարաբաղյան իրադարձությունների վերաբերյալ սփյուռքի, հատկապես Մերձավոր Արևելքի երկրները և ՀՃՇ-ի մասնաճյուղերը բուռն գործունեություն ծավալեցին հայրենիքի և Արցախի խնդրի վերջնական նպատակին համելու հաճար [22]: Այդ նոյն թերթի հաղորդմամբ՝ ԽՄ համեմատելիքամական կեցվածք որդեգրած հայ կուսակցությունները և նրանց մամուլը բողոքեցին Բեյրութի ԽՄ դեսպանություն դեմ [23]: Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների շուրջ անրավարար տեղեկություններ էին տրամադրվում: Սակայն նրանց բողոքներն ու պահանջներն անպատասխան մնացին:

Ընդառաջելով ԽՄԿ ղեկավար Ս.Ս. Գորբաչովի դիմումին՝ ուղղված Ադրբեյջանի և Յայաստանի աշխատավորությանը՝ հայ ժողովուրդը մեկ մարդու պես 1988թ. փետրվարի 27-ին դադարեցրեց համազգային ցույցը: Ժամանակ և առիթ ընծերնելով՝ ԽՄԿ Կենտկոմը համակողմանիորեն ու աչալրջորեն քննարկեց հարցը [24]: ՏԱԱՍ-ը, Կենտրոնական հեռուստատեսությունը և մամուլը պատասխանատվություն են կրում Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ ծավալված իրադարձությունների բնույթը աղավաղելու, խորհրդային հասարակությանը ապակողմնորոշելու, հայ և ադրբեջանական ժողովուրդների միջև թշնամություն սերմանելու ընդհարումների համար: Երևանյան ցույցերին ու միտիմզերին ականատես եղած ԽՄԿ Կենտկոմի քարտուղարներ Դոլգիխն ու Լուկյանովը չկարողացան կատարված դեպքերին տալ ծշմարիտ և անկողմնակալ գնահատական, ավելացնում էր «Մարմարա» օրաթերթը [25]: Վերակառուցման հակառակորդները մեկ ամիս շարունակ դիտավորյալ փորձում էին հայ ժողովրդի արդարացի զայրութն ու վրդովմունքը ներկայացնել իրու հակախորհրդային արարք: ԽՄԿ Կենտկոմի օրգան «Պրավդան» մարտի 27-ի համարում հրապարակեց «Հույզեր և բանականություն» ծավալուն հոդվածը՝ Յուլ. Առաքելյանի, Զ. Կատիմակեկովի և Կ. Օվչարենկոյի ստորագրություններով: Աղավաղելով պատմությունը՝ հոդվածագիրները հասնում են նրան, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի արդար պայքարին սատար կանգնած հայորդները բնորոշվում են որպես «ազգայնականներ» և ղեկավարող «հակասոցիալիստականներ» [26]:

Քանի դեռ արցախահայությունը շարունակում էր իր գիտակցական ու օրինական պայքարը, հայ ժողովուրդը հայրենիքում և թե Սփյուռքում նեցուկ է կանգնում այդ պայքարին: Լիբանանահայ կոմունիստներն իրենց սրբազն պարտը են համարում մինչև վերջին շունչը լինել հայ ժողովրդի հետ: Լիբանանի կոմկուսը Երևանին կոչ էր անում Լիբանանի կոմունիստական կուսակցության կենտրոնի քարտուղար Ջառինին՝

1. ԽՄԿ Կենտկոմին անհապաղ ուղղել ճամակ՝ հայտնելով Լիբանանի արար և հայ կոմունիստների համերաշխությունը ԼՂ հայ ժողովրդի արդարացի պահանջին: Պատմական անարդարությունը կարող է ուղղվել ոչ թե բարենորոգումների, այլ Յայաստանի հետ ԼՂ-ի վերամիավորումով՝ ուղղենիշ ունենալով ազգերի ինքնորոշման Լենինյան սկզբունքը ու ԽՍՀՄ-ի սահմանադրությունը:

2. Ընդունել Լիբանանի կոմկուսի քաղբյուրոյի պաշտոնական դիրքորոշումը ԼՂ-ի հարցի մասին, ինչպես նաև ԽՄԿ-ում վերակառուցման ու դեմոկրատիայի

թշնամիների կողմից հայ ժողովրդի և Ղարաբաղյան շարժման դեմ ուղղված հրեշտավոր մեղադրամքները դադարեցնել:

Այդ պահանջը հրատարակվել է Լիբանանի Կոմկուսի «Ալ-Նիտաա» և Լիբանանի կոմկուսի հայկական կազմակերպության «Ազգային մշակույթ» պաշտոնաթերթում [27]: Կուսակցության պաշտոնական դիրքորոշումը տարածվել է կուսակցության բոլոր կազմակերպությունների վրա: Աղրբեջանի կառավարությունն այս անգամ էլ դիվանագիտական խաղ խաղաց: Յունիսի 10-ին կայանալիք Աղրբեջանի Գերագույն խորհրդի նիստը հետաձգվեց հունիսի 17՝ Դայաստանի Գերագույն խորհրդի ընդունելիք որոշման համապատասխան որոշում ընդունելու հստակ դիտավորությամբ: Դամայն հայությունը պահանջում էր հունիսի 15-ի նիստին Արցախն ընդունել Դայաստանի կազմի մեջ[28]:

Դուզումները և լարվածությունը իր գագաթնակետին հասան երևանի և Աղրբեջանի միջև, ավելացնում էր պաշտոնաթերթը: Վերջինս էլ հավելում էր, որ գործադրությունների պատճառած վնասն անցնում էր 40 միլիոնից: Յունիսի 13-ին համագային գործադրով շարունակվեց՝ Լեռնային Ղարաբաղը Դայաստանին միացնելու պահանջով: Մոտ 700 հազար ցուցարաններ ցույցը շարունակեցին Օպերայի հրապարակի շրջակայքում, որտեղ էլ ելույթ ունեցավ Սուլեն Դարությունյանը և հավաստիացրեց, որ Դայաստանի Գերագույն խորհրդը հունիսի 15-ի նիստում Արցախը կվերամիավորի Դայաստանին: Պաշտոնաթերթը ավելացնում է, որ «Վեզիրովը պնդում էր, թե Լեռնային Ղարաբաղը երբեք չպետք է տրվի Դայաստանին»[29]:

Ինչպես նշում է «Երկաթե Շերեփի» թերթը, Դայկական խորհրդային Սոցալիստական Դանրապետության բարձրագույն Գերագույն մարմնը 1988 թվականի հունիսի 15-ին արձագանքեց Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզի հայ բնակչության արդարացի պահանջին և դրա հիման վրա՝ ԼՂԻՄ-ը Աղրբեջանական ԽՍՀ-ի կազմից դուրս գալու և Դայկական ԽՍՀ-ին վերամիավորվելու վերաբերյալ[30]: Այդ որոշումը ընդհանուր ոգևորություն առաջացրեց համայն հայության մեջ:

Սակայն, ինչպես սպասվում էր, Աղրբեջանի Գերագույն խորհրդը հայությանը երկար սպասեցնել չտվեց մերժողական պատասխանին: Ահա այսպես հարցը հնքնարերաբար փոխադրվեց՝ խորհրդային Սիության Գերագույն խորհուրդ:

ԽՍՀՄ-ի Գերագույն խորհրդի 1988 թվականի հուլիսի 18-ի որոշումով Լեռնային Ղարաբաղը դարձյալ մնաց Աղրբեջանի ծիրանների մեջ [31]: Սա մարդկային քաղաքակրթության, պատմական արդարության և Լենինյան «ազգային քաղաքականության» օրենքների ամենակոպիտ ոտնահարում էր:

Այսպիսով՝ մի կողմից դահիճ թուրքիան արժանանում է Ամերիկյան հոգատարությանը, իսկ մյուս կողմից՝ նրա «հարազատ» եղբայր Աղրբեջանը պաշտոնապես Մոսկվայի շրջանակների հովանավորությունն ու քաջալերանքն էր վայելում:

Սկիուտքում գործող Դայկական զանազան կազմակերպություններ և խմբեր սկսեցին համախմբվել ու անկախ նրանց գաղափարական համոզմունքից՝ գորավիզ կանգնեցին հայրենակիցներին: Սակայն այս ողջունելի երևույթը դանդաղուեն ընթացավ:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Երկարե Ծերեփ» (Լիբանան), թիվ 10, մարտ, 1988:
2. Նույն տեղում:
3. «Ազդակ», Լիբանան թիվ 258, 28.02.1989:
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում:
6. «Ալիք» (Իրան)օրաթերթ, թիվ 45, 25.02.1989:
7. Նույն տեղում:
8. «Հուսաբեր», Եգիպտոս թիվ 113, 01.09.1988:
9. Նույն տեղում:
10. «Ազդակ» թիվ 119, 03.02.1988:
11. Նույն տեղում
12. «Արև», Եգիպտոս թիվ 220835, 22.05.1988:
13. Նույն տեղում:
14. Նույն տեղում:
15. «Հուսաբեր» թիվ 113, 28.09.1988:
16. Նույն տեղում:
17. «Ազդակ» 09.010.1988:
18. «Ալիք», թիվ 44, 24.02.1988:
19. Նույն տեղում, թիվ 12 մայիսի, Բացառիկ, 1988, էջ 1:
20. Նույն տեղում, թիվ 16 հունիսի, Բացառիկ, 1988, էջ 1:
21. Մարմարա (Կ. Պոլիս), 26.02.1988:
22. Նույն տեղում, էջ 13:
23. Նույն տեղում:
24. Մարմարա 03.03.1988:
25. Նույն տեղում:
26. Նույն տեղում, 30.03.1988:
27. Նույն տեղում, էջ 28:
28. Նույն տեղում, էջ 34-35
29. Նույն տեղում, էջ 35:
30. Նույն տեղում, էջ 36:
31. Նույն տեղում, թիվ 14 հուլիսի, 1988, էջ 1:

## **РЕЗЮМЕ**

### **Подъем освободительной борьбы армянского населения Арцаха и его отражение в армяноязычной печати стран Ближнего Востока (февраль – июль 1988 года)**

**Нвард Седракян**

В данной статье представлены материалы, отражающие освободительную борьбу армянского населения Арцаха с февраля по август 1988 года, которые получили резонанс в армяноязычной прессе Ближнего Востока.

В то же время в армяноязычной печати Египта, Ирана, Ливана и Турции публикуются многочисленные статьи о происходящих в Арцахе исторических событиях февраля 1988 года с последующей хронологией развития событий.

Однако также звучат слова критики в адрес неармяноязычной печати, которая по-своему пыталась представить события, освещенные в армяноязычной печати Ближнего Востока относительно национально-освободительной борьбы армянского населения Арцаха.

## **SUMMARY**

### **The Rise of Liberation Movement of the Artsakh Armenians and its Response Among Armenian Mass-Media of the Middle East (from February to July, 1988) Nvard Sedrakyan**

The article contains material reflecting the well-known historical events from February to August, 1988 and their response among the Middle East Armenian mass-media.

At that time numerous articles, concerning the events in Artsakh in February, 1988, alongside with the successive important events were published in Armenian mass-media of Egypt, Iran, Lebanon and Turkey.

There was much critics concerning the non-Armenian press of the Middle East. They were said to present the events of the liberation movement in Artsakh.